

# § 93 ՈՒՄՐՈՒ Ն.Ա.ՄԵԼԻՔՅԱՆԻ ԱՆՎԱՆ

## ԹԻՎ 2 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ՝ ՓԲԸ-ի

### ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳԻՐ


#### ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Շենքը քարաշեն է և կառուցվել է 1931 թվականին: Կատարվել է շենքի մի մասի ամրացում, մնացած մասերը կարիք ունեն հիմնական վերանորոգման: 1935 թվականից գործել է որպես բուժ.միավորում: 1965 թվականին Լենինականի թիվ 2 բուժ- միավորումը կոչվել է վաստակավոր բժիշկ Նիկոլայ Արտեմի Մելիքյանի անվամբ: 1983 թվականին վերանվանվել է Ն.Ա.Մելիքյանին անվան թիվ 1 բուժասանմաս: 1993 թվականին վերանվանվել է Ն.Ա.Մելիքյանի անվան թիվ 2 բուժմիավորում: 1996 թվականին Պետական ձեռնարկության կարգավիճակին: 1998 թվականին բուժմիավորումը պետական ձեռնարկությունից անցել է Պետական փակ բաժնետիրական ընկերության կարգավիճակին: 2001 թվականին անցել է Փակ բաժնետիրական ընկերության կարգավիճակին: 2003 թվականից վերանվանվել է «Գյումրու Ն.Ա.Մելիքյանի անվան թիվ 2 պոլիկլինիկա» ՓԲԸ, որով և գործում է մինչև օրս: Ընկերությունը անվանափոխվել է և հիմնական փաստաթղթերը համապատասխանեցվել է ՀՀ Շիրակի մարզպետի 06.11.2000թ. թիվ 118 որոշման և ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն ընկերությունը գտնվում է քաղաքի կենտրոնում և ունի հարմար դիրք ազգաբնակչության սպասարկման համար, Մազմանյան 3 հասցեում:

Բժշկական հաստատության անվանումը և կազմակերպական-իրավական ձևը.

«Գյումրու Ն.Ա.Մելիքյանի անվան թիվ 2 պոլիկլինիկա» ՓԲԸ:

Ընկերության կառուցվածքը սխեմատիկորեն պատկերված է հետևյալ ձևով.



#### ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Պոլիկլինիկայի զարգացման, մատուցվող բժշկական ծառայությունների ընդլայնման և որակի բարձրացման նկատառումներից ելնելով՝ անհրաժեշտություն է առաջացել տեխնիկական վերագինման և նոր ծառայությունների ներդրման, որը հնարավոր չէ իրականացնել պոլիկլինիկայի միջոցների հաշվին:

Ներգրավված ներդրումային միջոցները ուղղվելու են բացառապես բժշկական ախտորոշիչ

սարքավորումների ձեռքբերմանը, ինչպիսիք են դուպլեքստեսակի էխոսկոպիան, էխոէլեկտրոնեցեֆալոգրաֆիան, գաստրոսկոպիան և կոլոնոսկոպիան, համակարգչային տոմոգրաֆիկ ախտորոշման բազմաշերտանի սարքավորումը, լաբորատոր հետազոտություններ իրականացնելու համար նախատեսված սարքավորումները:

Պոլիկլինիկան ազգաբնակչությանը մատուցում է հետևյալ ծառայությունները:

- 1) Բժշկական ընդհանուր պրակտիկա
- 2) Մանկաբուժական ընդհանուր պրակտիկա
- 3) Մանկաբարձագինեկոլոգական ընդհանուր պրակտիկա
- 4) Ընտանեկան բժշկություն
- 5) Իմունոկանխարգելիչ
- 6) Ընդհանուր վիրաբուժական
- 7) Նյարդաբանական
- 8) Սրտաբանական
- 9) Ակնաբուժական
- 10) Զիթ-կոկորդ-ականջաբանական
- 11) Տուբերկուլյոզային
- 12) Մաշկաբանական, վեներաբանական
- 13) վարակիչ հիվանդություններ
- 14) Ներզատաբանական
- 15) Լաբորատոր-ախտորոշիչ
- 16) Ճառագայթային ախտորոշիչ
- 17) Ֆունկցիոնալ ախտորոշիչ
- 18) Կլինիկական դեղորայքային
- 19) Ներառյալ թմրամիջոցներ պարունակող դեղերի բացթողում

Տվյալ գործարար ծրագրի հիման վրա կարելի է ընդլայնել ծառայությունները, որպեսզի հետագայում ամբուլատոր-պոլիկլինիկական օդակի դերը բարձրացվի, կանխագելիչ ուղղվածությունը ուժեղացվի, բժշկական օգնություն ստանալու մատչելիությունը բարձրացվի:

## **ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ**

Առողջության առաջնային պահպանման համակարգի զարգացման հիմնական նպատակները սերտորեն շաղկապված են և համընկնում են ազգային առողջապահական քաղաքականության հիմնական նպատակներին և ուղղություններին:

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ  
ԱՊԱՀՈՎՈՒՄ

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑ.ԱՆԱՊԱՀՈՎ  
ԵՎ ԱՌԱՆՁԻՆ/ՀԱՏՈՒԿ  
ԽՄԲԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ  
ԱՆՁԱՆՑ ԲԺՇԿԱԿԱՆ  
ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ  
ԱՊԱՀՈՎՈՒՄ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ  
ԿԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ  
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ  
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

ՄՈՐ ԵՎ ՄԱՆԿԱՆ  
ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԻԳԵՆԻԿ ԵՎ  
ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ  
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Պոլիկլինիկայի դերը շատ մեծ նշանակություն ունի Գյումրի քաղաքում: Պոլիկլինիկան սպասարկում է 26742 ազգաբնակչություն, որից՝ մեծահասակ ազգաբնակչության թիվը կազմում է 21664 մարդ, իսկ մանկական ազգաբնակչության թիվը՝ 5078 երեխա:

### ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ոլորտի բարեփոխումն ուղղված է հետևյալ հիմնական նպատակների իրականացմանը՝

\* Կանոնակարգել ֆինանսական հոսքերի բազմայնությունը, ֆինանսական ներդրումների արդյունավետությունը.

\* բնակչության առողջության ոլորտում հասնել հնարավորինս նպաստավոր արդյունքների՝ շեշտադրելով հիվանդությունների կանխարգելման միջոցառումները՝ դիտարկելով կանխարգելման ուղղվածությունը ոչ միայն հիվանդները, այլև բնակչության առողջ խմբերը.

\* բարելավել առողջության առաջնային պահպանման օղակում ցուցաբերվող բուժօգնության որակն ու արդյունավետությունը,

\* բարձրացնել բուժօգնության մատչելիությունը՝ համակարգում ներդնելով որակյալ բժշկությունը.

\* առողջության առաջնային պահպանման օղակում ուժեղացնել ընտանեկան բժիշկի, տեղամասային թերապևտի և տեղամասային մանկաբույժի դերը՝ կանոնակարգելով

առաջնային և մասնագիտացված բժշկական օգնությունն իրականացնողների գործունեությունն ու փոխհարաբերությունները՝ այդպիսով ապահովելով բուժօգնության շարունակությունը,

\*առողջության առաջնային պահպանման համակարգը դարձնել առավել ճկուն և բնակչության կարիքներն արագ արձականքող:  
Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության և սպասարկման աշխատանքները լիարժեք և արդյունավետ կազմակերպելու նպատակով հարկավոր է բացակայող առանձին տեսակներ կազմակերպել հիմնական կադրային ներուժի միջոցով:

**ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

- Ընկերության գործունեության հիմնական ուղղությունները հետևյալն են՝
- ա) Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում իրականացվող աշխատանքները:
  - բ) Վճարովի ծառայությունները.
  - գ) Այլ գործունեությունը

**ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ՀՆԱՐԱԿՈՐ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ**

Ընկերությունը նպատակ ունի բարձրացնելու ամբուլատոր-պոլիկլինիկական համակարգում աշխատող բուժանձնակազմի հմտություններն ու գործունեության որակը: Ընկերությունը կարիք ունի արդիականացման, անհրաժեշտ է բուժանձնակազմի պարբերական վերապատրաստում, կենսաթոշակային տարիքի անձանց կրճատում, շենքային պայմանների բարելավում, բուժ սարքավորումների և գործիքների հագեցվածության ավելացում:

**Ներդրումային փաթեթի ՈՒԹՅՎ վերլուծություն**

Ուժեղ	Թույլ
<ul style="list-style-type: none"> <li>• բավարար սարքավորումներով հագեցվածություն,</li> <li>• բավարար բուժանձնակազմ</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• բուժսարքավորումների մաշվածություն</li> </ul>
Հնարավորություններ	Վտանգներ
<ul style="list-style-type: none"> <li>• Ժամանակակից սարքավորումների ձեռքբերում</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Բնակչության նվազում</li> </ul>

**ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՕՊՏԻՄԱԼԱՑՄԱՆ ՈՒՂՈՒԹՅԱՄ ՏԱՐԿՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ**

.Ժամանակակից պահանջները բավարարելու, մատչելիությունը բարձրացնելու և արդյունավետությունը ապահովելու նպատակով.

- Անհրաժեշտ է բուժսարքավորումներով և գործիքներով հագեցվածության բարձրացում, որի համար պետք է ունենալ արդի ժամանակաշրջանին համապատասխան բուժսարքավորումներ և գործիքներ.
- Ընտանեկան բժշկի գրասենյակային սարքավորումներ.
- Անհրաժեշտ է պետական պատվերի շրջանակներում լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների ծավալների ավելացում.
- Միջոցների արդյունավետ օգտագործում.
- Պոլիկլինիկայի ներքին հարդարում
- Բժշկական կահույքի ձեռքբերում
- Նոր ծառայությունների ներդրում
- Մարդկային ներուժի զարգացում
- Բուժանձնակազմի պարբերական վերապատրաստում որակյալ ծառայություններ մատուցելու համար
- Աշխատակազմի և կառուցվածքի հնարավոր փոփոխություններ

Բուժհիմնարկի գործունեության պլանավորման հիմնական ուղղություններն են՝ կառավարման համակարգի կատարելագործումը, մարդկային ներուժի զարգացումը, շենքային պայմանների բարելավումը, բժշկական սարքավորումներով և գործիքներով հագեցվածության բարձրացումը:

- **Կառավարման համակարգի կատարելագործում:** Բուժհիմնարկի կառավարման հիմնական կանոնները սահմանված են գործող օրենսդրությամբ և Ընկերության կանոնադրությամբ: Հետևաբար զարգացման ծրագիրը այս ուղղությամբ առընչվում է հիմնարկի ներքին կառուցվածքի զարգացմանը:
- **Մարդկային ներուժի զարգացման** հիմնական ուղղություններից է բուժանձնակազմի պարբերական վերապատրաստումները, որոնք հանդիսանում են որակյալ ծառայությունների ապահովման հիմնական նախապայմաններից մեկը:
- **Շենքային պայմանների բարելավում:** Շենքը ունի հիմնական և ընթացիկ վերանորոգման կարիք: Շենքային պայմանների անհամապատասխանությունը հանդիսանում է բնականոն գործունեությանը խոչընդոտող գլխավոր խնդիրներից մեկը:
- **Բուժսարքավորումների և գործիքներով հագեցվածության բարձրացում:** Սա նույնպես բուժհիմնարկի բնականոն գործունեության կարևոր նախապայմաններից է: Սարքավորումների պահանջարկը պետք է հստակ հիմնավորվի բուժհիմնարկի առջև դրված խնդիրներով, ինչպես նաև սպասարկվող բնակչության թվաքանակով, մատուցվող ծառայությունների անվանացանկով և ծավալներով, այսինքն՝ կարևոր է գնահատել նաև նոր սարքավորումների ձեռքբերման տնտեսական հիմնավորվածությունը /քանի որ նոր բուժսարքավորումները, որպես կանոն, ունեն զգալիարժեք, դրանք նպատակահարմար է ձեռքբերել այն դեպքում, երբ հնարավոր է ապահովել դրանց ծանրաբեռնված աշխատանքը/:

**ԲՈՒԺՀԻՄՆԱՐԿԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

Շենքը քարաշեն է, կառուցված է 1931 թվականին, կատարվել է շենքի մի մասի ամրացում, մնացած մասերը կարիք ունեն հիմնական վերանորոգման

**2. ՆԵՐԿԱ ԻՐԱԿԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

<b>2.1 Բժշկական գործունեություն</b>			
	2019 թ.	2020 թ.	2021 թ.
Դիսպանսեր հսկողության տակ գտնվող հիվանդներ տարեվերջին	3087	4020	4422
Հաճախումներ այդ թվում՝	75778	88529	97382
Ամբուլատոր հաճախումներ	60108	60264	66292
Տնային հաճախումներ	7670	9701	10670

Հաճախումների ընդհանուր թվից կատարվել է			
Բուժման նպատակով	58011	69413	76353
կանխարգելիչ	17767	19106	21018
այլ			
Հաճախումների միջին թվաքանակը մեկ բնակչի հաշվով	11	15	16

**Վերլուծական մեկնաբանություններ**

Քանի որ պետպատվերի շրջանակներում ազգաբնակչության բուժսպասարկման ծավալները տարիների ընթացքում ավելացել է և ամբողջատոր պոլիկլինիկական ծրագրերում անվճար ընդգրկվել է ամբողջ ազգաբնակչությունը անկախ տարիքից և սոցկարգավիճակից արդյունքում նկատելի աճել են հաճախումները:

**2.2 Կադրեր**

	Ընդհանուր	Քանակը ըստ տարիքային խմբերի		
		մինչև 25	25-55	55-ից բարձր
Բժշկական անձնակազմ	33	--	15	18
Միջին բուժանձնակազմ	65	--	50	15
Կրտսեր բուժանձնակազմ	4	--	1	3
Վարչատնտեսական անձնակազմ	18	--	6	12

**Վերլուծական մեկնաբանություններ**

ա/ կենսաթոշակի տարիքի անձանց կրճատում ըստ աղյուսակի և ըստ տարիքի  
բ/ միջին բուժանձնակազմը շատ է և ունենք երիտասարդ կադրերի պահանջարկ

Հազ.դրամ

**2.3 Ծախսերը և նրանց կառուցվածքը**

	2019 թ.	2020 թ.	2021 թ.	2022 թ.	2023 թ.
Աշխատավարձ	195051	198952	198952	198952	198952
Դեղորայք	49295	51760	54348	57065	59918
Սարքավորում /մաշվածություն/	--	--			
Կոմունալ	5984	5984	5984	5984	5984
Ընթացիկ նորոգում	590	620	651	684	718
Այլ /Միջինարկային բուժաստատություն, Էլեկտրոնային առողջապահության օպերատորի ծախս, չփոխհատուցվող հարկեր և այլն/	12890	12890	12890	12890	12890
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>263810</b>	<b>270206</b>	<b>272825</b>	<b>275575</b>	<b>278462</b>

**Վերլուծական մեկնաբանություններ**

ա/ աշխատավարձ 73.6 %  
բ/ դեղորայք 19,2 %  
գ/ կոմունալ 2,2 %

<b>2.4 Եկամուտ</b>					
	2019 թ.	2020 թ.	2021թ.	2022 թ.	2023 թ.
Ընդամենը բժշկական գործունեությունից, այդ թվում՝	218100	229005	240455	252478	265102
Վճարովի	26214	27525	28901	30346	31863
Պետ. պատվեր	191886	201480	211554	222132	233239
Ընդամենը այդ թվում՝	47038	49390	51859	54451	57173
Ոչ բժշկական գործունեությունից	1733	1820	1911	2006	2106
Անհատույց և մարդասիրական օգնությամբ տրամադրված, այդ թվում	45305	47570	49948	52445	55067
սարքավորում	--	--	--	--	--
դեդորայք	43051	45203	47463	49836	52328
Այլ /Սուբսիդիաներ, դրամաշնորհներ և այլն/	2254	2367	2485	2609	2739
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>265138</b>	<b>278395</b>	<b>292314</b>	<b>306929</b>	<b>322275</b>
<b>Վերլուծական մեկնաբանություններ</b> <i>Տոկոսը ընդհանուր եկամուտների մեջ</i> Վճարովի 9,9% Պետպատվեր 72.4%					

<b>2.5 Կապիտալ ներդրումներ</b>					
	2019 թ.	2020 թ.	2021 թ.	2022 թ.	2023 թ.
Ընդամենը, այդ թվում՝					
Սարքավորումների և այլ գույքի մասով	2168	2276	2390	2510	2635
Կապիտալ նորոգումների մասով	1425	1496	1571	1649	1731
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>3593</b>	<b>3772</b>	<b>3961</b>	<b>4159</b>	<b>4366</b>
<b>Վերլուծական մեկնաբանություններ</b> <i>Ժամանակակից պահանջները բավարարելու նպատակով, մատչելիությունը բարձրացնելու, արդյունավետությունը ապահովելու համար, վիճակագրական և տեղեկատվական համակարգը բավարարելու համար անհրաժեշտ է նոր սարքավորումների ձեռքբերում</i>					

**3. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ**

Ռազմավարական նպատակի սահմանում
Պայիատիվ բժշկական օգնություն և սպասարկում, անձնակազմի պարբերական վերապատրաստում, ընտանեկան բժշկության գրասենյակի սարքավորումների ձեռքբերում, բուժսարքավորումների և գործիքներով հագեցվածության բարձրացում արդի ժամանակաշրջանին համապատասխան: Շենքային պայմանների բարելավում:
Հիմնավորում
ա/բնակչության մատչելի սպասարկում բ/ միջոցների արդյունավետ օգտագործում գ/ հիվանդության կանխարգելում և առողջության ամրապնդում

Ռիսկերի գնահատում
ա/ լիցենզիայի բացակայություն բ/ վերապատրաստվող բժիշկների պակաս գ/ դոնոր կազմակերպության ֆինանսավորման ընդհատում դ/ սարքավորումների պակաս ե/ աշխատավարձի ֆոնդի գերաճ կապված մասնագիտացման ծախսերի հետ

4. ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Ոազմավարական նպատակ 1.			
Նախատեսվող միջոցառումների նկարագրություն	Միջոցառման ժամկետներ	Ֆինանսավորման աղբյուրներ	Ակնկալվող արդյունքներ
1. Անձնակազմի /բժիշկներ և բուժքույրեր/ հերթական պարբերական վերապատրաստումների կազմակերպում	2020-2023թթ.	Բուժհաստատության և աշխատողների անձնական միջոցներով	Միջոցառումներն ակնկալում է թիվ 2 պոլիկլինիկայի բուժաշխատողների գիտելիքների և որակավորման բարձրացում, նրանց կողմից ազգաբնակչությանը մատուցվող բժշկակա նօզնության և սպասարկման որակի և մատչելիության բարձրացում: Բարյացակամ վերաբերմունքի ձևավորում:
2. Նոր սարքավորումների ձեռքբերում՝ ա) Էխոսրտագրության սարք, բ) սոնոգրաֆիայի ժամանակակից, ավելի զգայական սարք:	2020-2023թթ.	Ճապոնական դեսպանատան կողմից ակնկալվող ֆինանսական միջոցներով	Ա) Էխոսրտագրության սարքը բուժհաստատությունում ունի մեծ պահանջարկ և որակյալ մասնագետի առկայությունը թույլ է տալիս մատուցել նաև վճարովի ծառայություններ, որը կնպաստի վճարովի մուտքերի ավելացմանը: Բ) Բացի սոնոգրաֆիկ հետազոտության բոլոր նկատառումներից, այսօր խիստ կարևորվում է սոնոգրաֆիկ հետազոտության դերը կորոնավիրուսային թոքաբորբի վաղ հայտնաբերման առումով, որը նորություն է բժշկագիտության մեջ և կնպաստի կորոնավիրուսի վաղ ախտորոշմանը և բուժմանը:
3. Աուդիոմետրիա	2021-2022	Ֆինանսական ներդրում չի պահանջում	1) Մարզում աուդիոմետրիա իրականացվում է միայն Է. Մատեի անվան պոլիկլինիկայում: Հետազոտությունը խիստ անհրաժեշտ է բոլոր լսողության խնդիրներ ունեցող անձանց համար՝ հաշմանդամություն որոշելու, լսողական սարքի ընտրության հարցերում: Սակայն աուդիոմետրիան առավել կարևոր և ռազմավարական իմաստ է ստանում մանկական ծանրալսության և բնածին խլության դեպքում, որոնք բերում են երկրորդային համիրության և մտավոր զարգացման հապաղման, իսկ վերջինս իր հերթին բերում է



			<p>հաշմանդամության թվի ավելացման՝ իր քաղաքական և սոցիալական հետևանքներով:</p> <p>2) Աուդիոմետրիան ապագա ունեցող վճարովի ծառայություն է, որը կնպաստի եկամուտների աճին:</p>
<p>4. Բուժհաստատությունում գրասենյակային գույքի և սարքավորումների ձեռքբերում</p>	2020-2023թթ.	Ճապոնական դեսպանատան կողմից ակնկալվող ֆինանսական միջոցներով	Արդյունքում կունենանք բուժաշխատողների և մնացած անձնակազմի աշխատանքային գործունեության պայմանների բարելավում, աշխատանքի արդյունավետության բարձրացում:
<p>5. Բուժհաստատությունում ցերեկային ստացիոնար ծառայության ծավալում (1-2 մահճակալ) Էնդոկրին հիվանդանոցի համար</p>	2020-2023թթ.	Բուժհաստատության սեփական միջոցների հաշվին /թվով 2 մահճակալի ծավալում/	Ցերեկային ստացիոնարը կոչված է մատչելի դարձնելու Էնդոկրին հիվանդանոցի բուժօգնությունը և սպասարկումը, թերևազնելու ստացիոնարի ծանրաբեռնվածությունը և պակասեցնելու քաղաքացու ֆինանսական բեռը:
<p>6. Մանկաբարձ-գինեկոլոգների և մանկաբույժների ուժերով “Ապագա մայրիկ” ակումբի ձևավորում և դիդակտիկ ֆիլմերի, սեմինարների միջոցով 7-9 ամսեկանում հղիների համար կրթական ծրագրի իրականացում:</p>	2020-2021թթ	Ֆինանսական ներդրում չի պահանջվում	Կբարձրանա հղիների իրազեկումը առողջ հղիության, անձնական հիգիենայի, սննդակարգի և Նորածնի խնամքի հմտությունների վերաբերյալ, արդյունքում կունենանք առողջ հղիություն, խնամված և առողջ Նորածին:
<p>7. Տարեցների և շարժողական խնդիրներ ունեցող ազգաբնակչության և բուժօգնության կազմակերպումը տնային պայմաններում՝ աշխատանքային թիմի ստեղծման ճանապարհով՝ համագործակցելով հասարակական սեկտորի հետ, կոնկրետ դեպքում “Հայկական Կարիտաս” և “Առաքելություն Հայաստան” հասարակական կազմակերպությունների գրասենյակ:</p>	2020-2023թթ.	Բուժհաստատության միջոցների հաշվին	Կապահովվի այս խավի բուժօգնությունը և սպասարկումը տնային պայմաններում, իսկ մեր միջնորդությամբ հասարակական կազմակերպությունների կողմից կապահովվի նրանց սոցիալիզացիոնական ռեաբիլիտացիան, տնային խնամքը, հնարավորության դեպքում կիրականացվի նաև աջակցություն մնդի տեսքով:

8. Պոլիկլինիկայի ներքին հարդարում	2020-2023թթ.	Բուժհաստատության սեփական միջոցների հաշվին	ԿԿանխվեն բոլոր տեսակի անհարմարությունները, կատեղծվեն բարեկեցիկ աշխատանքային պայմաններ, աչք շոյող միջավայր, որը կբերի բուժհաստատության ծառայություններից օգտվող այցելուների թվի ավելացում:
9. Բուժհաստատության հիմնական շենքի մնացած մասի գազաֆիկացում	2020-2023թթ.	Սեփական հաշվին	Գազի օգտագործումը ավելի էժան կլինի, ինչպես ֆինանսական միջոցները կուղղվեն սպասարկվող ազգաբնակչության բուժման և սպասարկման որակի լավացմանը, ինչպես նաև աշխատավարձի բարձրացմանը
10. Որպես հակահրդեհային միջոցառում շենքն ապահովել հրդեհ ազդարարող սարքով	2020-2023թթ.	Սեփական հաշվին	ԿԿանխվեն բոլոր տեսակի հրդեհներն իրենց հետևանքներով
11. Կոյուղագծի ապամոնտաժում, որը կնպաստի հաճախակի վթարների կանխմանը:	2020-2023թթ.	Սեփական ֆինանսավորում	Հնարավորություն կլինի խուսափել կոյուղագծի (արհեստական և կենցաղային) հաճախակի խցանումներից, գործընթացը կլինի վերահսկելի, դրան ուղղված ծախսերը կպակասեն, կբարելավվի բուժհաստատության շրջակա միջավայրի սանիտարական վիճակը
12. Ընտանեկան բժշկության ստորաբաժանման հատվածի վերանորոգում	2020-2023թթ.	բուժհաստատության սեփական միջոցների հաշվին	Ներքին հարդարում և կոսմետիկ վերանորոգման աշխատանքների իրականացման շնորհիվ ընտանեկան բժշկի ծառայության բաժինը կդառնա հարմարավետ, բարեկարգ, սանիտարահիգիենիկ նորմերի համապատասխան, որը կնպաստի ազգաբնակչության որակյալ բուժօգնության և սպասարկման ապահովմանը, ինչպես նաև բուժաշխատողի աշխատանքային պայմանների բարելավմանը
13. Պալիատիվ բժշկության օգնության ներդրում այն է մասնագիտացված բժշկական օգնություն մարդկանց, որոնք ապրում են լուրջ հիվանդություններով և ունեն միաժամանակ ցավի և ընկճախտի համախտանիշ:	2022-2023թթ.	Արտասահմանյան այլ կազմակերպության կողմից ակնկալվող ֆինանսական միջոցներով, ինչպես նաև վճարովի ծառայություն է, որի եկամուտները կապահովեն գործառույթը:	Իր տեսակով համարվելով նորամուծություն և չունենալով մրցակից, գործառույթը կնպաստի հիվանդի տառապանքի մեղմացմանը դեղորայքի, ինչպես նաև հոգեբանական միջամտությունների շնորհիվ, որը կմատուցվի բժշկական թիմի միջոցով՝ տան պայմաններում: Վերջինս կնպաստի ոչ միայն հիվանդի, այլ ընտանիքի կյանքի որակի բարելավմանը:  Ծառայությունը կմատուցվի վճարովի սկզբունքով, որը բացի իր կարիքներից, կապահովի լրացուցիչ եկամուտ բուժ հաստատության համար:

14. Աշխատողների աշխատավարձի բարձրացում մինչև 10%	2020-2023թթ.	Վճարովի մուտքերի և պետբյուջեի հատկացումներից հնարավոր խնայողությունների հաշվին	Կբարլավվի բուժհաստատության աշխատողների կյանքի որակը, որը կբերվի նաև նրանց պատասխանատվության բարձրացմանը հիվանդներին որակյալ բուժօգնության և սպասարկման իրականացման ոլորտում:
15 Ստեղծել որակի բարելավման խորհուրդ	2020-2023թթ.	Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում	Խորհուրդը կարող է վերահսկել և համակարգել արձականքվող բժշկական սիսթեմերը և կատարել շտկման աշխատանքներ:

Այս ամենը կնպաստի առկա մարդկային, կյուբական և ֆինանսական ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացմանը, որը ուղղակիորեն կբերի բուժհաստատության կողմից բուժօգնության և սպասարկման որակի և մատչելիության բարձրացմանը, աշխատանքային պայմանների բարելավմանը և աշխատավարձերի բարձրացմանը:

\*\*\*Պալիատիվ անհրաժեշտ է անբուժելի հիվանդությամբ տառապող կյանքի վերջին փուլում, երբ նրանք ունեն ցավագրկման, սիմտոմատիկ բուժման կամ հոգե-սոցիալական խնդիրներ: Պ-ը հնարավորինս բարձրացնում է նրանց կյանքի որակը:

Ցավագրկման հարցը լուծված է:

«Վերջ ցավին» այդ սկզբունքով արշավ են մեկնարկել մի խումբ հասարակական կազմակերպություններ:

Պետք է նաև ընդլայնվել ցանկը ցավագրկող դեղամիջոցներ ստանալու համար: ԱՆ պատրաստ են օրենսդրական բարեփոխումների փաթեթ կառավարություն ներկայացնելու համար

### ՀՈՍՊԻՍ ԿԵՆՏՐՈՆ

Դա հիվանդության վերջին փուլում գտնվող հիվանդների մի հանգրվան է, որտեղ մարդիկ ստանում են լիարժեք և արժանապատիվ խնամք:

Կարող են ընդունել երկարաժամկետ և կարճաժամկետ խնամքի կարիք ունեցող անձանց անկախ տարիքից և սեռից:

Գոյություն ունի կանխարգելիչ բուժօգնության մի թեզ, եթե չես կարող օգնել հիվանդին առողջանալ, ապա գոնե օգնիր, որ կողքի առողջները չհիվանդանան:

Հիվանդը երբ դուրս են գրվում հիվանդանոցից, ասելով որ ոչինչ չունեն անելու, ապա տեղափոխվում է Պ-վ բաժանմունք և ստանում է արժանապատիվ խնամք և սոցիալ-հոգեբանական աջակցություն:

Աշխատողները պատասխանատվություն են կրում հիվանդների կոկիկ և հիգիենիկ վիճակի համար:

Ծառայությունը վճարովի է, իսկ արժեքը կախված է հիվանդության բարդության աստիճանից:

\*\*\*COVID19 պլանային կարգով իբրև ռուտին հետազոտություն օգտագործում են թոքերի ուլտրաձայնային հետազոտություն: Դա տարածված չէ Հայաստանում և ունի մի շարք հստակ առավելություններ

1/ Ունի հնարավորություն իրական ժամանակում և դինամիկ կրկնվող տեսնել թոքերի վիճակը, գնմահատես ոչ միայն հեղուկի առկայությունը և բացակայությունը այլևս խոռոչում այլ նաև թոքերի հյուսվածքի վիճակը:

2/ COVID19 վարակով կասկածվող հիվանդներին չտանես ռենտգեն հետազոտության, ԿՏ հետազոտության, այդ ամենից հետո նոր որոշել հիվանդի տեղափոխման հարցը: Այս հետազոտությունը տեղում թույլ է տալիս որոշումներ ընդունել

3/ Ուլտրաձայնային հետազոտությունը ամենամեծ առավելությունն է, որը ընդգծվեց և շեշտվեց այս համավարակի ընթացքում: